

ՄԱՐԻՆԵ ՅԱԴՈՒԲՅԱՆ

ԶԵՂԶՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Զեղչումը լեզվական հնար է, որը բազմիցս եղել է լեզվաբանների ուշադրության կենտրոնում:

Իր թվացյալ պարզությամբ հանդերձ՝ զեղչումն ունի կիրառական բարդ դաշտ, որով էլ պայմանավորված է վերջինիս գործաբանական արժեքը հանգամանակից վերլուծության ենթարկելու անհրաժեշտությունը: Լինելով լեզվի քերականական-կառուցվածքային մակարդակի կարևոր տարրերից մեկը՝ զեղչումը մասնակից է լինում նաև լեզվի իմաստային մակարդակին՝ նպաստելով ոչ միայն ասության, այլ նաև տեքստի բովանդակության ձևավորմանը:

Ինչպես ընդունված է տեքստի լեզվաբանության մեջ, զեղչումը հատկապես բնորոշ է բանավոր խոսքին՝ իրար հաջորդող փոխկապակցված ասությաների միությանը:

Զեղչումը ծագել է «էլիպսիս» հունարեն բառից, որը նշանակում է «բացթողում», «պակաս»: Զեղչմանը որպես լեզվական երևույթի, անդրադարձել են ինչպես հայ և ռուս, այնպես էլ անգլիացի և ամերիկացի լեզվաբանները՝ դրան տալով յուրովի մեկնաբանում:

Սենք կանդրադառնանք լեզվաբանական մոտեցումներից մի քանիսին, որոնք պայմանականորեն կարող ենք դասակարգել հետևյալ կերպ՝

- զեղչումը որպես լեզվի կառուցվածքային մակարդակի տարր /բացթողում/
- զեղչումը որպես ոճական հնար
- զեղչումը որպես խոսքային ռազմավարության դրսևորում:

Դիտելով զեղչումը որպես շարակարգային մակարդակի լեզվական երևույթ է. Աղայանը գտնում է, որ վերջինս խոսքի ուրիշ անդամներով արտահայտվող կամ ինքնին կռահվող բառի բացթողումն է¹:

Փորձելով գնահատել զեղչման լեզվաբանական արժեքը Դ. Պետրոսյանը զեղչյալ է համարում այն նախադասությունը կամ կապակցությունը, որում կա հեշտ վերականգնելի անդամի բացթողում, երբ այն մտքով

¹ Տե՛ս Է.Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Ե., 1976, I հ., էջ 371.

հասկացվում է: Հ. Պետրոսյանը զեղչման մի տեսակ է համարում նաև համառոտությունը, երբ խուսափում են հենց նոր հիշատակված բառը, ձևը կրկնելուց, լայն իմաստով, երբ արտահայտության հնարավոր կառույցներից նախընտրում են համառոտը: Լեզվաբանը հնարավոր է համարում նաև «զեղչված» տերմինի գործածումը ստորոգյալ չունեցող նախադասությունների այն տարատեսակի վերաբերյալ, երբ ստորոգյալը ոչ միայն նախորդ համատեքստում չի հիշատակված, այլև այն վերականգնելու ամենաթեշտություն անգամ չկա²:

Ս. Գյուլբուղադյանը գտնում է, որ զեղչումը վերականգնման ենթակա կամ սպասելի անդամի բացակայությունն է: Նա նշում է, որ երբեմն նախադասությունների այս կամ այն անդամը բացակայում է կառույցից, բայց խոսքային միջավայրից ու իրադրությունից գիտակցվում է. լսողը, կարդացողը բացակա բառը մտքով վերականգնում է: Այստեղից հետևում է, որ ոչ բոլոր անդամների բացակայությունն է կարելի զեղչում համարել: Չեղչում է կոչվում այն անդամի բացակայությունը, որի առկայությունը տվյալ կառույցում սպասելի է, պարտադիր, և առանց այդ անդամի տվյալ նախադասությունների կազմը թերի է դառնում³:

Ինչպես ասվեց, զեղչման հետևանքով նախադասությունների կազմը թերի է դառնում, ուստի և որոշ լեզվաբաններ առաջարկում են անվանել այն թերի նախադասություն: Ինչպես տեսնում ենք, թերի լինելը վերաբերում է ոչ թե նախադասության բովանդակությանը, այլ նրա կազմին. շարակարգային կառուցվածքից բացակայում են նախադասության անդամներ, որոնց տեղը մնում է թափուր: Սակայն մտքի տեսակետից այդ տեղերը թափուր չեն մնում, այլ լրացվում են, վերականգնվում նախորդ համատեքստից: Հետևաբար, կառուցվածքային տեսակետից թերի համարվող զեղչյալ նախադասությունն իմաստային առումով ամբողջական է և խոսքում լիիրավ կատարում է իր հաղորդակցական դերը: Այսպիսի «թերի» նախադասությունը պետք է տարբերակել այն նախադասություններից, որոնցում կա մտքի թերիություն: Նախադասությունն իմաստային առումով կիսատ է, քանի որ պարունակում է թերի քերականական կառույց բառակապակցություն, որը չի կարող վերականգնվել համատեքստից և, հետևաբար, այդպիսի ասույթը չի կարող հաղորդակցական դեր կատարել:

Այդպիսի հաղորդակցական ընդհատված կառույցները թերի նախադասությունները, հաճախ են հանդիպում առօրյա բանավոր զրույցի ընթաց-

² Տե՛ս Հ.Զ. Պետրոսյան, «Հայերենագիտական բառարան», Ե., 1987, էջ 98.

³ Տե՛ս Ս.Գյուլբուղադյան, «Ժամանակակից հայերենի շարահյուսություն», Ե., 1988, էջ 236.

քում, երբ խոսողին ընդհատում են խոսակցության պահին՝ ասույթը թողնելով անավարտ: Այսպիսով, քանի որ թերի տերմինով հնարավոր չէ տարբերակել մտքի և կառուցվածքի անավարտությունը, մենք նպատակահարմար ենք համարում կազմությամբ թերի, բայց իմաստով ամբողջական նախադասությունը կոչել զեղչված նախադասություն:

Այսպես, Ս. Աբրահամյանն առաջարկում է թերի անվանել այն նախադասությունը, որի որևէ անդամ կամ անդամներ զեղչված են, բայց հասկացվում են⁴: Թվում է, թե այս հարցում համակարծիք են Ս. Աբրահամյանի հետ Դ. Ռոզենտալն ու Ս. Տելենկովան⁵: Նրանք թերի են անվանում այն նախադասությունը, որին բնորոշ է քերականական կառուցվածքի թերիությունը, այսինքն, երբ նախադասությունների մեջ բացակայում են մեկ կամ մի քանի անդամներ (զլխավոր կամ երկրորդական), որոնք պարզ են դառնում համատեքստից կամ իրադրությունից:

Դ. Ռոզենտալն ու Ս. Տելենկովան տալիս են նաև թերի նախադասությունների հետևյալ տեսակները՝ թերի համատեքստային նախադասություն, թերի իրադրային նախադասություն, թերի երկխոսական նախադասություններ:

Այն թերի նախադասությունը, որի բացակայող անդամը նշվել է նախորդ համատեքստում, կոչվում է թերի համատեքստային նախադասություն: Այն հաճախ նկատվում է բարդ նախադասությունների երկրորդական կազմում և կապակցական կառույցներում: Այն թերի նախադասությունը, որի բաց թողնված անդամը հայտնի է դառնում իրադրությունից, կոչվում է թերի իրադրային նախադասություն: Այն նախադասություն - ռեպլիկները (հարց-նախադասություն, պատասխան-նախադասություն, ասույթ-նախադասություն), որոնք տվյալ համատեքստում սերտորեն կապված են միմյանց և կառուցվածքի տեսակետից մեկը մյուսի շարունակությունն են կազմում լրացվելով արտալեզվական միջոցներով (ժեստեր, միմիկա, շարժումներ), կոչվում են թերի երկխոսական նախադասություններ: Սակայն, թերի նախադասություններից բացի Դ. Ռոզենտալն ու Ս. Տելենկովան տարբերում են նաև զեղչված նախադասություններ, որոնք համարվում են վերջինիս տարատեսակը: Այսպես, զեղչված է համարվում այն թերի նախադասությունը, որում բայ-ստորոգյալի բացակայությունը համարվում է օրինաչափություն: Այսպիսի նախադասությունը հասկանալու համար համատեքստ անհրաժեշտ չէ: Նախադասության իմաստային և քերականական կառուցվածքի շնորհիվ վերջինս դառնում է ավարտուն լեզվահալորդակցական միավոր:

⁴ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, «Գայոց լեզու», Ե., 1992, էջ 153.

⁵ Տե՛ս Д. Э. Розенталь, М. А. Теленкова, «Справочник лингвистических терминов» М., 1972, стр. 181.

Վերը դիտարկված մոտեցումներն իրենց թվացյալ տարբերության հետ մեկտեղ, այնուհանդերձ, ունեն մեկ կարևոր նմանություն: Ղրանցում զեղչումը դիտվում է շարակարգային տեսակետից որպես լեզվի կառուցվածքային մակարդակի տարր:

Ձեղչվել կարող են նախադասությունների տարբեր անդամներ և գլխավոր, և երկրորդական: Ձեղչումը երբեմն մեծ չափերի է հասնում, և զեղչված անդամներով նախադասությունը կորցնում է իր քերականական սովորական տեսքը: Նախադասությունների անդամը կարող է հասկանալի լինել ու զեղչվել, երբ գործածվում է կից կամ մոտիկ նախադասությունների մեջ կամ հասկացվում է խոսելու պայմաններից: Ձեղչման ենթակա են նախադասությունների բոլոր անդամները: Սակայն, ինչպես նշում է Ս. Գյուլբուղադյանը, երկրորդական անդամների զեղչումը այնքան զգալի չէ, որքան գլխավոր անդամների զեղչումը: Ըստ այնմ, թե նախադասությունների որ անդամն է զեղչված, տարբերակում են զեղչված ենթակայով, ստորոգյալով, խնդրով և պարագայով նախադասություններ:

Լեզվաբանության մեջ ընդունված է նաև զեղչմանը վերագրել ոճական արժեք (Ս. Գյուլբուղադյան, Զ. Պետրոսյան, Ի. Գալպերին):

Ս. Գյուլբուղադյանը գտնում է, որ զեղչման շնորհիվ խոսքը դառնում է ճկուն, հակիրճ, ազատվում է ավելորդ կրկնությունից: Ի. Գալպերինը նշում է, որ զեղչումը բնորոշ երևույթ է խոսքում, և այն ի հայտ է գալիս իրադրությունից: Չնայած այն բանին, որ այս երևույթը հատուկ է բանավոր խոսքին, այն նոր որակ է ձեռք բերում գրավոր խոսքում կիրառվելիս դառնալով վերհատությանից տեղեկատվություն պարունակող ոճական հնար: Ի. Գալպերինի տեսանկյունից ուղիղ հաղորդակցման ժամանակ զեղչված նախադասությունը չի կարող համարվել ոճական հնար, քանի որ այն ուղղակի բանավոր խոսքին հատուկ կառուցվածքային տարր է: Որպես ոճական հնար օգտագործելիս զեղչմանն են վերագրվում խոսակցական լեզվին բնորոշ մի շարք հատկանիշներ, երբ իրադրության օգնությամբ լրացվում է նախադասության բացակա անդամը: Սակայն, ինչպես նկատում է Ի. Գալպերինը, լինելով խոսակցական լեզվի տարր զեղչումը հազվադեպ է օգտագործվում որպես ոճական հնար: Օրինակ, օժանդակ բայի բացթողումը նախադասությանը տալիս է հուզական երանգ ավելի արտահայտիչ դարձնելով նրա հնչողությունը⁶:

Որպես ոճական հնար՝ զեղչումն օգտագործվում է նաև չափածո խոսքում: Այն հանդիսանում է նաև լռելու՝ չասելու միջոցներից մեկը: Ձեղչումը որպես ոճական հնար հաճախ կարելի է հանդիպել նաև ասացվածքներում և

⁶Տե՛ս I.R. Galperin, "Stylistics", M., 1981, էջ 231

հանելուկներում⁷։ Բլումֆիլդը, Իլիշը և Հորնբին նույնպես շեշտը դնում են գեղչման կառուցվածքային մակարդակի վրա։ Բլումֆիլդի տեսանկյունից գեղչված է այն նախադասությունը, որը չունի սովորական, ամենից ավելի քերականորեն տարածված օգտագործման ձև⁸։

Ձեղչված նախադասությունները սահմանելիս Իլիշը նշում է, որ վերջիններս կարող են ունենալ մեկ կամ մի քանի բաց թողնված անդամ, որոնք կարող են առանց կասկածի հասկացվել համատեքստից։ «Ձեղչված» տերմինն Իլիշը կիրառում է այս տիպի բոլոր նախադասությունների համար առանց տարբերակելու, թե որ անդամը կամ անդամներն են դուրս մղված նախադասության կազմից⁹։ Հորնբին գեղչումը՝ որպես երևույթ բացատրում է այսպես։ Ձեղչումը նախադասության կազմի մեջ մտնող բառի կամ բառերի բացթողումն է, որոնք անհրաժեշտ են միտքը կամ լեզվական կառույցն ամբողջացնելու համար¹⁰։ Ձեղչումը կատարում է նաև հաղորդակցական գործառույթ։ Այս գաղափարին է համապատասխանում ակտուալ տրոհման տեսությունը (W. Matezius, N. Paul, I. Raspopov, etc.), ըստ որի նախադասությունը բաղկացած է երկու մասից։ Թեման հանդիսանում է ասույթի կազմում սկզբնական կետը, այսինքն տրված տեղեկատվությունը։ Մյուսը՝ ռեման, համուն որի նախադասությունն ասվում է կամ գրվում, իր մեջ պարունակում է նոր, հրատապ նշանակություն ունեցող տեղեկատվություն։ Այսպիսով, բնական է, որ գեղչելիս նախադասությունների առաջին մասը սովորաբար բաց է թողնվում, իսկ մյուսը՝ ռեման, միշտ ներկա է։ Ձեղչված նախադասությունների բացթողնված թեման խոսակցի ուշադրությունն է կենտրոնացնում ռեմատիկ մասի վրա ավելի ցայտուն դարձնելով խոսքի կապակցումը¹¹։

Այս հարցում նույն մոտեցումն է դրսևորվում Հոլիդեյի մոտ, ըստ որի գեղչումը կապակցման միջոց է։ Նա գեղչումն անվանում է «գրոյական կապ»։ Ուստի այն չի սահմանվում որպես իմաստային հարաբերություն, բայց ինչպես տեսնում ենք, այն բառաքերականական կապ է՝ «հարաբերության համագործակցման մեջ, քան իմաստի»¹²։ Ձեղչված նախադասությունը պահանջում է լսողից, որ նա լրացնի բացթողնված բառերը՝ օգտվելով այն տեղեկատվությունից, որ նա ունեցել է մինչ այդ պահը։ Միայն այդ ժամանակ արդյունքը

⁷ St'u Л. И. Тимофеев и С. В. Тураев, "Словарь литературоведческих терминов", М., 1974, стр. 466.

⁸ St'u Л. Блумфилд, "Язык", М., 1968, 185.

⁹ St'u Ilysh, "The Structure of Modern English", L., 1971, 262.

¹⁰ St'u Hornby "Dictionary of Modern English", L., 1980.

¹¹ St'u Л. П. Чеховян, "Синтаксис диалогической речи современного английского языка", М., стр. 10, 1979.

¹² St'u M. Halliday, "An Introduction to Functional Grammar", L., 1990.

կլինի կապակցված: Նա գտնում է, որ միշտ հնարավոր է վերականգնել զեղչված տարրն այնպես, որ այն դառնա ամբողջովին ճիշտ: Քանի որ զեղչումը բառաքերականական միջոց է, ապա փոխանակման են ենթարկվում բառերը, որոնք փոխանցվում են խոսողից լսողին (ինձնից քեզ և այլն) և տրամադրության փոխանցումն է, որտեղ որ հարմար է:

Ըստ Ս. Հոլիդեյի զեղչումները լինում են երկու տեսակի բանադարձում (anaphoric), կատաֆորիկ (cataphoric, exophoric):

Առաջին տեսակի զեղչումներում նախադասությունների մի մասը ենթադրվում է տեքստի նախորդ մասից: Երկրորդ տեսակի զեղչումները կախված չեն նախորդում տեղի ունեցած գործողության հետ, բայց ի հայտ են գալիս հաջորդող համատեքստից, կոնկրետ խոսողից կամ լսողից:

Հոլիդեյը տարբերակում է զեղչման երեք հիմնական համատեքստ՝ 1 նախադասություն, 2 բայական խումբ, 3 անվանական խումբ:

Նախադասության մեջ զեղչումը կապված է բայի եղանակի հետ: Երկխոսության մեջ այն վերաբերում է հարց-պատասխան հարաբերությանը: Այստեղ կարող ենք տարբերակել երկու տեսակի նախադասությունների զեղչումներ՝ 1 այո /ոչ զեղչում (ընդհանուր հարց), 2 Wh- հարցական բառերով զեղչում (հատուկ հարց):

Հոլիդեյը նաև նշում է, որ երկխոսության մեջ պատասխանում կարող է զեղչվել ամեն ինչ, բացի անհրաժեշտ տեղեկատվությունից, այսինքն՝ ռեմայից:

Ձեղչման տեսակները դասակարգելիս Հոլիդեյի մոտեցումը գրեթե համարժեք է Լ. Բարխուդարովի տեսակետին: Նա զեղչված է կոչում այն նախադասությունը, որի մեջ կա գոնե մեկ բառի բացթողում:

Ձեղչված նախադասությունները լինում են 1. շարույթորեն վերականգնելի զեղչված նախադասություններ, 2 հարացուցորեն վերականգնելի զեղչված նախադասություններ:

Առաջին տեսակի նախադասություններում զեղչումը կարող է վերականգնվել հենց նույն, նախորդող կամ հաջորդող նախադասությունների միջոցով: Երկրորդ տեսակի նախադասություններում զեղչումը կարող է վերականգնվել միայն նույնատիպ կառույցների միջոցով, որոնք հանդիպում են լեզվում, բայց տվյալ զեղչված նախադասությունների համատեքստին չեն պատկանում: Կա նաև ևս մեկ տեսակի զեղչված նախադասություն, որը կոչվում է անորոշ դերբայով նախադասություն¹³:

¹³ Տե՛ս Լ.Շ.Бархударов, «Структура простого предложения современного английского языка», М., 1966, 178.

Քննարկելով գեղջումը որպես խոսքային ռազմավարություն իրենց տեսակետներն են հայտնել Ռ. Քուլըրը և Վ. Բուզարովը:

Համակողմանի մանրակրկիտ քննությունը ցույց է տալիս Քուլըրը գտնում է, որ գեղջումը կիրառվում է կրկնությունից խուսափելու համար: Ձեղջման մյուս կարևոր պատճառն այն է, որ բաց թողնելով նախկինում ասվածը՝ ուշադրությունը կենտրոնացվում է նոր տեղեկատվության վրա¹⁴:

Ձեղջումները կարող են դասակարգվել երկու խմբի՝ ա) գեղջում, որը կախված է լեզվական համատեքստից, բ) գեղջում, որը կախված չէ լեզվական համատեքստից:

Ըստ իրենց հաղորդակցական և իմաստային հատկանիշների գեղջված նախադասությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝ հարց-պատասխան, ասույթ-հարց, ասույթ-ասույթ:

Քուլըրը չի առանձնացնում «հարց-հարց» խումբը: Նա ենթադրում է, որ այն համընկնում է «ասույթ-հարց» խմբի հետ:

Ձեղջված պատասխան նախադասությունները կարող են լինել կրկնություն, ընդլայնում, համալրում:

Կարելի է հանդիպել նաև գեղջված պատասխանների միաձուլված տարբերակների, այնպիսիք, ինչպիսիք են ընդլայնում-համալրում, կրկնություն-համալրում, կրկնություն-ընդլայնում: Վ. Բուզարովի հետազոտման արդյունքները բերում են այն ենթադրության, որ գեղջումը բառի տնտեսում է¹⁵:

Ձեղջումները հաճախ հանդիպում են երկխոսություններում, մեծ մասամբ հարց ու պատասխանի ձևով, որոնք էլ մեծ դեր են խաղում տարբեր խոսողների նախադասությունների կապակցման մեջ:

Ձեղջման համար կա երեք մի դրոշմապատճառ: Բաց թողնելով՝ գեղջելով լսողին արդեն ծանոթ լեզվական նյութը, խոսողը ուշադրությունը կենտրոնացնում է նոր տեղեկատվության վրա: Երկրորդ խոսակցի պատասխանը կարող է պարունակել տարբեր տեսակի գեղջումներ խուսափելու համար առաջին խոսողի նախադասությունների մի մասի կամ ամբողջի կրկնությունից: Բաց թողնվածը կարելի է վերականգնել նախորդող համատեքստի հիման վրա: Այնուամենայնիվ, գեղջման որոշ տեսակներ կախված չեն համատեքստից և կարող են կախված լինել կոնկրետ իրադրությունից:

Կառուցվածքային մակարդակում գեղջումներն ավելի շատ են ուսումնասիրված: Կուզենայինը անդրադառնալով դրանցից մի քանիսին՝ ավելի

¹⁴ St'u R. Quirk, "A University Grammar of English", M., 1982, 230.

¹⁵ St'u V.V. Buzarov "Essentials of Conversational English Syntax", M., 1998, 36.

մանրամասնորեն և օրինակներով: Բաց թողնված տարրը, որը կախված է լեզվական համատեքստից, կարող է լինել՝

- ենթական - E.g. Don't know what to say.

Had a good time, did you? Want a drink?
Doesn't matter.

- ենթական և ստորոգյալի մի մասը (օժանդակ կամ կապակցող բայ)

E.g. Sorry I couldn't be there.

Looking for anybody?

No wonder he's late.

- ենթական և ամբողջ ստորոգյալը - E.g. Where's Alan – Outside.

Where are you going? - The park.

- ստորոգյալը (ինաստավոր բայը) - E.g. Who told you the news? – John.
John enjoys the theatre more than Susan.

- օժանդակ բայ «had»-ը (սովորաբար զեղչվում է խոսակցական անգլերենում, հատկապես ամերիկյան անգլերենում) - E.g. You better try it again.

Ձեռչումը հիմնականում տեղի է ունենում պատասխան ասույթներում: Հարցերը հաճախ բխում են նախկինում ասված ինչ-որ բանից: Երբեմն հարցը կարող է կազմված լինել նոր միավորից, իսկ նախորդը զեղչված: Հարց տվողը կարող է արտահայտել հուզմունք (քաղաքավարի հետաքրքրություն, կասկածամտություն, զարմանք և այլն): Պատասխանները կարող են լինել բացականչական և ընդգրկել նախկինում ասված որոշ բառերի կրկնություն:

Այն զեղչումները, որոնք կախված չեն լեզվական համատեքստից և կարող են վերականգնվել առանձին իրավիճակներից հաճախ վերաբերում են ոչ պաշտոնական ոճին: Ոչ պաշտոնական զրույցներում զեղչվում են հիմնականում հոդերը (որոշյալ և անորոշ), նախդիրները (ավելի հաճախ ամերիկյան անգլերենում):

Համադասական նախադասություններում կարող է զեղչվել

- ամբողջ ստորոգյալը և խնդիրը նախադասությունների երկրորդ մասում, եթե ենթակաները տարբեր են:

E.g. You will cook the meals today and Barbara tomorrow.

- կապող բայը և ստորոգյալը, եթե ենթակաները տարբեր են:

E.g. John was the winner in 1970 and Bob in 1976.

- մոդալ բայը նախադասությունների երկրորդ մասում, եթե ենթակաները տարբեր են: E.g. John must clean the shed and Peter read his book.

- իմաստավոր բայը, որը եթե նույնն է համադասական նախադասությունների երկու մասերում էլ, այն զեղչվում է երկրորդ մասում:

E.g. She'll write to her parents and he will to his sister

- գոյականով արտահայտված լրացյալը

E.g. We wanted fried fish, but they gave us boiled.

- դերբայական դարձվածք կամ խնդիրը, որը եթե նույնն է երկու մասերում էլ, զեղչվում է երկրորդ մասում:

E.g. John wrote to his parents yesterday and will be writing again today.

Ստորադասական նախադասություններում նույնպես կարող ենք հանդիպել զեղչումների

- «That» շաղկապը հաճախ զեղչվում է խնդիր երկրորդական նախադասություններում խոսակցական ոճում. E.g. I know he is a bachelor.

- «That» և «whom» հարաբերական դերանունները զեղչվում են որոշիչ երկրորդական նախադասություններում, որոնցում դերանունները նախադասությունների ենթակա չեն:

(«That»-ը օգտավորվում է գրական անգլերենում, «Who(m)»-ը և գրականում, և խոսակցականում). E.g. The house I live in is red.

The man I saw yesterday is Mary's husband.

- Նախդիրների օգտագործումը երկրորդական նախադասություններից առաջ ըստ ընտրության է: E.g. I was not certain what to do.

- «To» մասնիկը մեծ մասամբ զեղչվում է խոսակցական ոճում:

E.g. All I did was turn off the gas.

Ահա այս օրինակներով Վ. Բուզարովը փորձում է ցույց տալ զեղչման կիրառության լայն շրջանակը:

Տարբեր մոտեցումներ քննարկելուց հետո կարևոր է նշել այն հանգամանքը, որ զեղչումը չպետք է շփոթել փոխարինող բառերի հետ կամ վերաբերող բառերի հետ, որոնք հանդիսանում են կապակցման միջոց, երբ օգտագործվում են նախադասությունների բաց թողնված անդամի փոխարեն:

Հարկ է նշել նաև, որ զեղչում չեն համարվում նաև կրճատ ձևերը. հատկապես ապաթարցային կառույցները զրավոր խոսքում:

Այսպիսով, մեր այս համառոտ տեսական ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ զեղչված նախադասությունների խորը և բազմակողմանի հետազոտության համար անհրաժեշտ է քերականական-իմաստային մոտեցմանը համադրել մեկ այլ գործաբանական մոտեցում: Վերջինս թույլ կտա դիտել զեղչումը ոչ միայն որպես լեզվի կառուցվածքային մակարդակի տարր, այլ նաև որպես հաղորդակցական գործընթացի կապակցված, սահուն և իմաստալից իրականացումն ապահովող խոսքային ռազմավարության դրսևորում: